

ՄԱՀ ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵԶՅԱՆԻ
(1918—1972)

Հոկտեմբերի 13-ին, կարճ, բայց ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի նախկին անդամ և գրող Գրիգոր Հովհաննեսի Բեքմեզյանը:

Հանգուցյալը ծնվել է 1918 թվականին Կիլիկիայի Սիս քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Բեյրութի զանազան հայկական դպրոցներում:

1934-ին ընդունվել է Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանն ու ընծայարանը, ուր և ստացել է իր բարձրագույն կրթությունը՝ 1939-ին ավարտելով լսարանական բաժինը:

Այնուհետև աշխատանքի է անցել Բեյրութի հայկական դպրոցներում՝ որպես հայոց լեզվի ուսուցիչ:

1947 թվականին հայրենադարձվել է Հայաստան և հաստատվել Երևանում, ուր մինչև 1966 թվականը աշխատել է Երևանի ակումբա-գրադարանային տեխնիկումում՝ որպես անգլերեն լեզվի ուսուցիչ: Այս տարիներին զբաղվել է նաև գրականությամբ և հրատարակել է «Իրականացած երազ» և «Հայրենի տուն» գրքերը:

1966—1969 թվականներին աշխատել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում որպես բաժնի վարիչ:

1970 թվականից աշխատում էր «Լույս» հրատարակչությունում որպես սիյուռքահայ դասագրքերի խմբագրության վարիչ:

1961—1966 թվականներին եղել է ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: Այդ հանգամանքով երկու անգամ մասնակցել է Հռոմում Վատիկանի ժողովին:

Հանգուցյալի թաղումը կատարվեց հոկտեմբերի 14-ին:

Գրիգոր Բեքմեզյանը իր գիտակցական ողջ կյանքը նվիրել է հայ մշակույթի և հայոց վերածնված հայրենիքի ծառայության նվիրական գործին, և որպես այդպիսին՝ վայելել է իր շրջապատի, աշխատանքային իր ընկերների սերն ու հարգանքը:

Հանգի՜ստ իր ոսկորներին: